- *Աճի տեմպն օգոստոսին աճել է՝ հասնելով 10.9 տոկոսի (ՆՏՆԺՀ), ինչը պայմանավորված էր ծառայությունների ոլորտով:*
- *Օգոստոսին աննշան գնաճ է գրանցվել՝ պայմանավորված տրանսպորտային գների բարձրացմամբ (0.1 տոկոս):*
- *Ապրանքների արտահանման աճի տեմպը նվազել է՝ պայմանավորված դեպի Ռուսաստան արտահանումների 20 տոկոս նվազմամբ նախորդ ամսվա համեմատ:*
- *Օգոստոսին գրանցվել է բյուջեի 25 միլիարդ ՀՀ դրամ պակասուրդ, միչդեռ հանրագումարային բյուջեն եղել է հավելուրդային (տարեկան ՀՆԱ-ի 0.8 տոկոս):*
- *Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը և դրա հետևանքով փախստականների հոսքը հանգեցրել է ՀՀ դրամի ժամանակավոր արժեզրկման:*

Տնտեսական ակտիվության աճի տեմպը օգոստոսին հասավ 10.9 տոկոսի (ՆՏՆԺՀ, իրական արտահայտությամբ)՝ ի համեմատ հուլիսի 6 տոկոսի (ՆՏՆԺՀ): Սա հիմնականում պայմանավորված էր ոչ առևտրային ծառայությունների ոլորտով, որը կտրուկ աճ արձանագրեց՝ հուլիսի 5.8 տոկոսից (ՆՏՆԺՀ) հասնելով 13.8 տոկոսի (ՆՏՆԺՀ) օգոստոսին: Ներքին առևտրի ոլորտում աճի տեմպն արագացավ՝ հուլիսի 17.8 տոկոսից (ՆՏՆԺՀ) հասնելով 23.5 տոկոսի օոգոստոսին (ՆՏՆԺՀ) (Գծապատկեր 1): Այդուամենայնիվ, արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալը շարունակեց կրճատվել (հուլիսի -2.4 տոկոսից՝ –3.7 տոկոս օգոստոսին)՝ պայմանավորված մշակող արդյունաբերության ոլորտի մոտ 10 տոկոս անկմամբ (ՆՏՆԺՀ), ինչն իր հերթին հիմնականում պայմանավորված էր սննդամթերքի և ալկոհոլային խմիչքների արտադրության ծավալների կրճատմամբ և հանքարդյունաբերության ոլորտի աճի դանդաղ տեմպով (2.8 տոկոս, ՆՏՆԺՀ): Շինարարության ոլորտի աճն աննշան թուլացավ՝ միաժամանակ պահպանելով բարձր մակարդակ՝ 17.5 տոկոս (ՆՏՆԺՀ): Տարվա առաջին ութ ամիսների հանրագումարային աճը հասավ 10.4 տոկոսի (ՆՏՆԺՀ):

Դրամական փոխանցումների ներհոսքերն ու արտահոսքերն էականորեն ավելացան օգոստոսին՝ հուլիսի համեմատ՝ ձևավորելով 52 տոկոսով ավելի զուտ ներհոքսեր նախորդ ամսվա համեմատ (ՆԱՀ) (Գծապատկեր 2): Այդուամենայնիվ, օգոստոսին դրամական փոխանցումների զուտ ներհոսքն՝ անցած տարվա նույն ամսվա համեմատ 30 տոկոսով ցածր էր: Այս կրճատման պատճառը 74 տոկոսով ավելի բարձր արտահոսքն էր (այդ թվում՝ դեպի Ռուսաստան արտահոսքերի կրկնապատկումը՝ ցածր բազայից): Օգոստոսին դրամական փոխանցումների մեծամասնությունը եղել է Ռուսաստանի հետ՝ կազմելով ներհոսքերի 66.2 և արտահոսքերի՝ 20 տոկոսը: Մնացած արտահոսքերն ուղղված են եղել ԱՄՆ, Արևմտյան Եվրոպա և այլ երկրներ:

Գնանկումը, որն օգոստոսին 0.2 տոկոս էր, սեպտեմբերին վերածվեց 0.1 տոկոս գնաճի (ՆՏՆԺՀ): Դրա հետևանքով միջին գնաճը շարունակեց նվազել մինչև 2.8 տոկոս, ինչը զգալիորեն ցածր է 4 տոկոս թիրախային ցուցանիշից (Գծապատկեր 3): Միջին գնաճի դանդաղման հիմնական գործոնը սննդամթերքի գների անկումն էր, որը պահպանվեց սեպտեմբերին (ՆՏՆԺՀ)՝ չնայած վերջերս տեմպը չափավորվել է: Սեպտեմբերին գրանցվել է միայն տրանսպորտային գների աճ՝ մինչև 1.3 տոկոս (ՆՏՆԺՀ): Վերաֆինանսավորման դրույքը պահպանվեց 9.75 տոկոսի մակարդակում:

Արտաքին առևտրի աճի տեմպն օգոստոսին չափավորվեց: Ներմուծման և արտահանման աճը օգոստոսին կազմել է, համապատասխանաբար, 12 և 6 տոկոս (ՆՏՆԺՀ)՝ ի համեմատ հուլիսի 20 և 18 տոկոս ցուցանիշի (ՆՏՆԺՀ): Ամենաշատն արտահանվել են թանկարժեք քարեր (աճ 64 տոկոս) և հանքանյութ (աճ 12 տոկոս), սակայն կրճատում է արձանագրվել արտահանման մի շարք ուղղություններում, որոնցից են պատրաստի պարենային ապրանքներն ու մեքենասարքավորումները (կարևոր վերաարտահանվող ապրանք նախորդ ամիսներին): Հիմնականում ներկրվել են տրանսպորտային միջոցներ (աճ 67 տոկոս) և տեքստիլ արտադրանք (աճ 63 տոկոս): Ռուսաստան արտահանվող ծավալները 20 տոկոսով կրճատվել են (ՆԱՀ), իսկ Ռուսաստանից ներմուծվող ծավալներն ընդհանուր առմամբ ավելացել են 17.8 տոկոսով (ՆԱՀ): Հունվար-օգոստոս ժամանակահատվածում արտահանումն ու ներմուծումը ընդհանուր առմամբ

Կազմեց ավագ տնտեսագետ Արմինե Մանուկյանը,
amanookian@worldbank.org

ավելացել են, համապատասխանաբար, 51.8 և 53.8 տոկոսով:

ՀՀ դրամի վրա ժամանակավոր ազդեցություն է ունեցել սեպտեմբերի 19-ի հարձակումը Լեռնային Ղարաբաղի վրա, դրան հաջորդած փախստականների ճգնաժամն ու ընդհանուր անորոշությունը: ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը նվազել է 11 տոկոսով մինչև հոկտեմբերի 4-ը, երբ դրամը կրկին արժևորվեց ՀՀ կենտրոնական բանկի միջամտությամբ:

Գծապատկեր 1. Գրեթե բոլոր ոլորտներում տնտեսական ակտիվությունն արագացել է, իսկ արդյունաբերության ոլորտում՝ կրճատվել

(Տնտեսական ակտիվության ցուցանիշ, փոփոխությունը ՆՏՆԺՀ, %)



Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 2. Համախառն դրամական փոխանցումների ներհոսքերն ու արտահոսքերն օգոստոսին ավելացել են հուլիսի համեմատ

(հազար ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 3. Գնանկումը սեպտեմբերին վերածվեց ցածր գնաճի

(ՍԳՀ գնաճ, ՆՏՆԺՀ, փոփոխություն, %)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 4. ՀՀ դրամը ճնշման տակ էր Լեռնային Ղարաբաղի վրա հարձակման ու փախստականների ճգնաժամի հետևանքով

(ինդեքս. 2020 թ. մարտի 2 = 100)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Կազմեց ավագ տնտեսագետ Արմինե Մանուկյանը,
amanookian@worldbank.org

Գծապատկեր 5. Միջազգային պահուստները սեպտեմբերին նվազել են, սակայն դեռևս համեմատաբար բարձր են

(միլիոն ԱՄՆ դոլար)
(ներմուծման ամիսներ)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 6. Բյուջեի հաշվեկշռում 2023 թ. օգոստոսին հավելուրդը պահպանվել է

(միլիարդ ՀՀ դրամ)



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

Հոկտեմբերի կեսերին փոխարժեքը կազմում էր մոտավորապես 400 ՀՀ դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց՝ ընդամենը 0.6 տոկոս ավելի արժևորված (ՆՏՆԺՀ) (Գծապատկեր 4): Սեպտեմբերին միջազգային պահուստները նվազեցին 252 միլիոն ԱՄՆ դոլարով՝ հասնելով մոտ 4 միլիարդ ԱՄՆ դոլարի, որը համարժեք է 3 ամսվա ներմուծման ծածկույթի (Գծապատկեր 5):

Օգոստոսին գրանցվեց բյուջեի 25 միլիարդ ՀՀ դրամ պակասուրդ: Ընդհանուր եկամուտներն ու դրամաշնորհներն օգոստոսին ավելացան 8.5 տոկոսով (ՆՏՆԺՀ), իսկ ծախսերն ավելացան 18 տոկոսով: Ընթացիկ ծախսերն օգոստոսին 14.5 տոկոսով ավել են եղել (ՆՏՆԺՀ)՝ հիմնականում պայմանավորված սոցիալական աջակցության ու նպաստների 25.6 տոկոս ավելացմամբ (ՆՏՆԺՀ): 2023 թ. առաջին ութ ամիսներին եկամուտներն ավելացան 14.5 տոկոսով (ՆՏՆԺՀ), որը պայմանավորված էր ԱԱՀ, եկամտային հարկի ու շահութահարկի մեծ հավաքագրումներով, իսկ ծախսերն ավելացան 14 տոկոսով (ՆՏՆԺՀ)՝ այսպիսով ձևավորելով 72 միլիարդ ՀՀ դրամ հավելուրդ (կանխատեսված տարեկան ՀՆԱ-ի 0.8 տոկոս): Սպասվում է ծախսերի ավելացում տարվա մնացած ամիսների ընթացքում, ինչը պայմանավորված է Լեռնային Ղարաբաղից էթնիկ հայերի անսպասելի ներհոսքի (երկրի բնակչության մոտ 3.4 տոկոսը) հետևանքով առաջացած փախստականների ճգնաժամը լուծելու համար ընթացիկ ծախսերի արագացմամբ :

Ֆինանսական ցուցանիշները մնացել են կայուն. գրանցվել է կապիտալի համարժեքության և շահութաբերության ցուցանիշների աննշան փոփոխություն: Կապիտալի համարժեքության գործակիցն ավելացել է աննշան՝ 0.1 տոկոսով (ՆԱՀ)՝ կազմելով 20.2 տոկոս, մինչդեռ չաշխատող վարկերի գործակիցն աննշան նվազել է՝ հուլիսի 2.9 տոկոսից մինչև 2.8 տոկոս օգոստոսին: Շահույթաբերությունը ըստ ակտիվների ևս մի փոքր ավելացել է հուլիսի 3 տոկոսից մինչև 3.1 տոկոս՝ օգոստոսին: Օգոստոսին բանկային վարկերն ու ավանդներն ավելացել են, համապատասխանաբար, 1.6 և 2.1 տոկոսով (ՆԱՀ)՝ երկուսն էլ անվանական արտահայտությամբ և հիմնականում պայմանավորված ՀՀ դրամով արտահայտված վարկերի ու ավանդների ավելացմամբ, որը կնպաստի դոլարիզացման նվազեցմանը:

Կազմեց ավագ տնտեսագետ Արմինե Մանուկյանը,
amanookian@worldbank.org